ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

2000 թ. հոկտեմբերի 25–26-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջան: Գիտաժողովի նախաձեռնողն ու կազմակերպիչն էր ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը:

Երկօրյա գիտական նստաշրջանը բացեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը: Նշելով, որ նստաշրջանը կարևորվում է հատկապես նրանով, որ սա անկախության տարիներին կազմակերպված առաջին մեծ միջոցառումն է՝ նվիրված Ավետիք Իսահակյանին, ակադեմիայի պրեզիդենտն ասաց, որ «Հայաստանի Հանրապետության ստեղծումը եղել է Իսահակյանի կյանքի երազանքը, նրա ստեղծագործության հիմնական խնդիրներից մեկը, ինչի համար 20 տարեկան հասակից պայքարել է նա, բանտ նստել, աքսորվել ու քաղաքական ճնշումների ենթարկվել»: ԳԱԱ նախագահությունն այս տարի որոշում է ընդունել սկսել մեծ բանաստեղծի երկերի լիակատար (14 հատոր) գիտական հրատարակության նախապատրաստական աշխատանքները: Բանաստեղծի հոբելյանի նախօրեին Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը և ակադեմիայի «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեցին Ավիկ Իսահակյանի «Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն» ստվար աշխատությունը և Վարպետի 90-ամյա որդի Վիգեն Իսահակյանի «Հայրս» հուշապատումը: Հաջորդ տարի լույս կտեսնի մեծ բանաստեղծի Ակադեմիականի առաջին հատորը: Ակադեմիայի այս նախաձեռնությունն, անկասկած, ծանրակշիռ քայլ է Իսահակյանի ժառանգությունն ու վաստակը սերունդներին փոխանցելու ճանապարհին:

Այնուհետև կատարվեցին երաժշտական համարներ՝ Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների տեքստերի հիման վրա:

Գիտական նստաշրջանի առավոտյան և ցերեկային նիստերում լսվեցին երկու տասնյակից ավելի զեկուցումներ, որոնք մեկնաբանում են Իսահակյանի կյանքի ու ստեղծագործության բազում խնդիրներ: Բանասիրական գիտությունների դոկտոր Ազատ Եղիազարյանը հանդես եկավ «Ավետիք Իսահակյանը և իր «Ուստա Կարո» վեպը» զեկուցումով: Հայաստանի Հանրապետությունում Ուկրաինայի դեսպան, բանասիրական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Բոժկոյի զեկուցումը նվիրված էր «Իսահակյանը և ուկրաինական գրականությունը» թեմային: Դեսպանը կատարեց հետևյալ խոստովանությունը. «Եթե հնարավորություն լիներ, այստեղ հավաքված կլինեին շատ ու շատ երկրների ներկայացուցիչներ, որովհետև Իսահակյանն այն մեծությունն է, որն անգամ թարգմանված մեծ ազդեցություն է թողել այլ ժողովուրդների գրականության վրա»: Պրոֆեսոր

Արաքս Սարյանը ներկայացրեց Իսահակյանի ավանդը հայ երաժշտության պատմության մեջ: Բանասիրական գիտությունների դոկտոր Ավիկ Իսահակյանը հանգամանորեն ներկայացրեց իր հրատարակած «Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն» մենագրական աշխատության ստեղծման կոնցեպցիան և հիմնական սկզբունքները: Պրոֆեսոր Ավագ Խաչատրյանի ելույթը նվիրված էր Իսահակյանի «Մասսա Մանուկ» անտիպ վիպերգությանը:

«Իսահակյանի անդրանիկ ժողովածուն «Երգեր ու վերքեր» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների դոկտոր Վլադիմիր Կիրակոսյանը: Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի զեկուցումը նվիրված էր Իսահակյանի աշխարհայացքի ակունքներին: Բանասիրական գիտությունների դոկտոր Լուսիկ Կարապետյանը հանդես եկավ «Ավետիք Իսահակյանը Հովհաննես Թումանյանի մասին» թեմայով: «Նիկոլ Աղբալյանը Իսահակյանի ստեղծագործության մեկնաբան» վերնագրով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Համբարձում Քենդերյանը: Բանասիրական գիտությունների դոկտոր Ելենա Ալեքսանյանի զեկուցումը նվիրված էր «Իսահակյանը և ռուս գրականությունը» թեմային:

Հաջորդ օրվա հոկտեմբերի 26-ի գիտական նստաշրջանի աշխատանքները սկսվեցին բանասիրական գիտությունների դոկտոր Ալմաստ Զաքարյանի «Նդիշե Զարենցը և Ավետիք Իսահակյանը» զեկուցումով: «Իսահակյանի «Սասմա Մհեր» պոեմի վերջին տարբերակը» թեմայով զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Հասմիկ Աբեղյանը: Բանասիրական գիտությունների դոկտոր Ալբերտ Մուշեղյանը ներկայացրեց «Իսահակյանը և Գյոթեն» թեման: Բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Վարդանյանն անդրադարձավ Իսահակյանի «Ուստա Կարո» վեպի ստեղծագործական պատմությանը: Բանասիրական գիտությունների դոկտոր Սարգիս Հարությունյանի զեկուցման վերնագիրն էր «Ավետիք Իսահակյան. Հայաստանը Արևելք-Արևմուտք խաչմերուկում»: «Ազգայինը Ավետիք Իսահակյանի բանաստեղծական համակարգում» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Սևակ Արզումանյանը: Գիտաշխատող Շողեր Խաչատրյանը խոսեց Իսահակյանի ստեղծագործական ծոցատետրերի մասին:

Գիտաժողովի ավարտին Ավետիք Իսահակյանի մասին իր հուշերով հանդես եկավ ակադեմիկոս Գևորգ Բրուտյանը:

Ցավոք, զուտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով գիտաժողովին չկարողացան մասնակցել մի շարք գիտնականներ Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, ինչպես և Սփյուռքի հայ գաղթօջախներից: Ծրագրված է Իսահակյանի հոբելյանական գիտաժողովի բոլոր զեկուցումները ի մի բերել և հրապարակել առանձին գրքով: